**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 07.05.2021թ.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**

**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**

**թիվ ԳԲՔԱ-LO**-2021/28

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Գավառտրանս» ՍՊԸ

Երրորդ անձ՝ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Գավառտրանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Գուլաբյանի, ներկայացուցիչներ՝ Ա. Զոլյանի, Հ. Հովհաննիսյանի

«Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Ջրբաշյանի, Ա. Հովհաննիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ, կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գավառտրանս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 12.04.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը,

# ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 02.04.2021թ.-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը, հանձնաժողովի 02.04.2021թ.-ի 5-րդ արձանագրության 2.2-րդ կետով կայացրած որոշումը և կիրառելով կարգի 67-րդ կետը՝ պահանջել «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ից շտկել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ մասնավորապես հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշ, որը բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բեռնատարողությունը, ստուգելով մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը կամ ներկայացնել հավաստում, որ իր կողմից ներկայացված ապրանքը բավարարում է վերոգրյալ պահանջին:

Բողոքներ քննող անձին «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 12.04.2021թ.-ին:

13.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/28 համարի ծածկագիրը:

19.04.2021թ.-ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա 22.04.2021թ.-ին «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.04.2021թ.-ին, 29.04.2021թ.-ին և 07.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2021թ.-ին:

2. **<u>«Գավառտրանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**.

«Գավառտրանս» ՍՊԸ-ն 12.04.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով ս.թ. փետրվարի 15-ին կազմակերպել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9 ծածկագրով բաց մրցույթ: Նշյալ գնման ընթացակարգին մասնակցել է նաև մեր կազմակերպությունը՝ «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն: Մրցույթին առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԳՈԼԴ-ՖԼՈՒՐ» ՍՊԸ-ն: Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒ-ԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ»-ի համաձայն՝ ձեռքբերվող գնման առարկայի նկատմամբ սահմանված տեխնիկական պահանջները հետևյալն են.*

*Ծավալը՝ 1,0-1,1 մ3*

*Երկարությունը մմ՝ 1375 +/- 5%*

*Լայնություն, մմ՝ 1075 +/- 5%*

*Բարձրությունը, մմ՝ 1360 +/- 5%*

*Քաշը, կգ՝ ոչ պակաս 45*

*Բեռնատարողությունը, կգ՝ ոչ պակաս 450*

*Գույնը՝ մուգ կանաչ*

*Անիվների տրամագիծը՝ 200մմ*

*Կոնտեյների նկարագրությունը.*

*Նյութը՝ բարձր խտության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն, համաձայն EN 840 միջազգային ստանդարտի: Աղբարկղը տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտության - 200 մմ տրամագծով: Անվադողերը /անիվները/ պետք է ունենան փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ:*

*Աղբարկղը պետք է լինի.*

*Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից.*

*դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց.*

*ճկուն.*

*Հրդեհակայուն /չբոցավառվող/*

*հարվածակայուն.*

*տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան:*

*Վերևի մասում պետք է ունենա ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող կափարիչ, իսկ կողքերի մասում աղբատար մեքենայի միջոցով բարձրացման և բեռնաթափման հնարավորություն, որոնք ամրացված են կաղապարին մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Աղբարկղի աջ և ձախ կողմերում պետք է լինեն երկուական բռնակներ:*

*Աղբարկղերը պետք է ունենան համարակալում, որը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ և ծխախոտը աղբարկղ գցելն արգելող զգուշացում:*

*Աղբարկղերի վրա պետք է լինի «Աղբի տեղը աղբամանում է» գրվածքը և աղբամանի կափարիչը բացելու հնարավորությունը պատկերող նշան/լոգո/, որոնք պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:*

*Առաջարկվող ապրանքները պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:*

*Բեռնման եղանակը.*

*Հետևից բեռնաթափմամբ աղբատարների համար*

*Երաշխիքային ժամկետ.*

*Կենցաղային թափոնների կոնտեյների՝ ներառյալ բաղադրիչների համար - ոչ պակաս քան մեկ տարի:*

*Պատվիրատուի կողմից առաջարկվում է կոնտեյների նմուշը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:*

*Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին, պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:*

*Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:*

*Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:*

*Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. պարբերության համաձայն «Հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակցի կողմից պետք է ներկայացվի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը»: Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն «Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին»: Կարգի 41-րդ կետի համաձայն «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:*

*Մրցույթի հրավերի 8.3 կետով սահմանում է, որ «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը*

*չկնքելու համար»: Հրավերի 8.7 կետով սահմանում է, որ «Հանձնաժողովը հրավերի պահանջներին նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:*

*ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 67-րդ կետով սահմանում է, որ «Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:*

*«ԳՈԼԴ-ՖԼՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում, համաձայն՝ Հավելված 1.1-ի, նշված չէ առաջարկվող ապրանքի մակնիշը, ինչը և հնարավորություն չի տալիս արտադրողի պաշտոնական (https://iplast.com) կայքում տեսնել առաջարկվող ապրանքի նկարագիրը: Կայքում առկա տեսականու մեջ՝ մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում, պարզել ենք, որ «ԳՈԼԴ-ՖԼՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նշված արտադրողի, մասնավորապես՝ I-PLAST ընկերության կողմից արտադրվում են 1100լ աղբամանների երկու տեսակ, որոնց երկուսի բեռնատարողությունը պաշտոնապես 440 կգ է, ինչը չի բավարարում ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերով սահմանված՝ «բեռնատարողությունը՝ ոչ պակաս 450 կգ» պահանջը: Այսինքն, կարծում ենք, որ «ԳՈԼԴ-ՖԼՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է կեղծ տեղեկատվություն՝ աղբամանի բեռնատարողության մասով: Միաժամանակ, ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերով պահանջվող սերտիֆիկատների վրա, որը պետք է ներկայացնի հաղթող մասնակիցը, նույնպես նշված է, որ այդ աղբամանի բեռնատարողությունը 440 կգ է (կից՝ ներկայացնում ենք): Միևնույն ժամանակ, հայտնում ենք, որ մենք կապ ենք հաստատել I-PLAST ընկերության հետ և իրենց կողմից ևս ստացել*

*ենք պատասխան առ այն, որ իրենց կողմից արտադրվող 1100լ աղբամանների բեռնատարողությունն է առավելագույնը 440կգ:*

*Վերոգրյալ տեղեկատվության հավաստիությունը կարող եք ստուգել I-PLAST ընկերության ինտերնետային կայք-էջում (https://iplast.com/catalog/musornye-konteynery/chetyrekhkolesnye-musornye-konteynery/22-c19-konteyner-dlya-musora-1100-1/), ինչպես նաև կից ներկայցվող փաստաթղթում, միաժամանակ՝ խնդրում ենք հնարավորության դեպքում անմիջապես հարցում կատարել նշյալ ընկերությանը:*

*Նշված պահանջի կատարման համար 01.04.2021թ-ին «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:»:*

Ելնելով վերոգրյալից՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին և պատվիրատուին անվավեր ճանաչելու գնահատող հանձնաժողովի կողմից 02.04.2021թ.-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը, հանձնաժողովի 02.04.2021թ.-ի 5-րդ արձանագրության 2.2-րդ կետով կայացրած որոշումը և կիրառելով կարգի 67-րդ կետը՝ պահանջել «Գոլդ-Ֆլուտ» ՍՊԸ-ից շտկել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ մասնավորապես հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշ, որը բավարարում է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ բեռնատարողությունը, ստուգելով մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը կամ ներկայացնել հավաստում, որ իր կողմից ներկայացված ապրանքը բավարարում է վերոգրյալ պահանջին:

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Բողոքներ քննող անձը 13.04.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/5572-2021 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 22.04.2021թ.-ին թիվ 02/61-45218h գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. **<u>Երրորդ անձ՝ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ն 22.04.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Մասնակից):

Մասնակիցը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Երրորդ անձը 20.04.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ձեր կողմից քննվում է «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից բերված 12.04.2021թ-ի ԳԲՔԱ-ԱՕ-2021/28 ծածկագրով բողոքը՝ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» բաց մրցույթի շրջանակներում:*

*Բողոք բերած անձը իր բողոքում պնդում է, որ մեր ընկերությունը ապրանքի ամբողջական նկարագրում ներկայացրել է ապրանքի մասին կեղծ տեղեկատվություն և չի նշել ապրանքի մակնիշը, որն էլ չի համապատասխանում «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի {այսուհետ' Մրցույթ )հրավերի պահանջներին:*

*Հայտնում ենք, որ բողոքաբեր անձի պնդումները փաստարկված չեն և զուրկ են որևէ ողջամիտ և/կամ օրինական հիմքերից՝ հետևյալ պատճառաբանությամբ՝*

*Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի {այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. պարբերության հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է.*

*«զ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող*

*ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):*

*«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնում արտացոլված աղյուսակի «ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** » սյունակը լրացված չէ ուստի հրավերով դրանք պարտադիր պայմաններ չեն, քանի որ ստորև բերված հղմամբ հստակեցվում է, որ. «**Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակը:...:»*

*Փոխարենը՝ Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» բաժնի համաձայն ապրանքի տեխնիկական բնութագիրը հետևյալն է.*

*Ծավալը՝ 1,0-1,1 մ3*

*Երկարությունը մմ՝ 1375 +/- 5%*

*Լայնություն, մմ՝ 1075 +/- 5%*

*Բարձրությունը, մմ՝ 1360 +/- 5%*

*Քաշը, կգ՝ ոչ պակաս 45*

*Բեռնատարողությունը, կգ՝ ոչ պակաս 450*

*Գույնը՝ մուգ կանաչ*

*Անիվների տրամագիծը՝ 200մմ*

*Կոնտեյների նկարագրությունը.*

*Նյութը՝ բարձր խտայնության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն, համաձայն EN 840 միջազգային ստանդարտի: Աղբարկղը տեղակայված է շարժական 4 անիվների վրա, որոնք ամրացված են կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը նույնպես պետք է լինեն բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության - 200 մմ տրամագծով: Անվադողերը /անիվները/ պետք է ունենան փոխարինման հնարավորություն: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պտտվում են ուղղաձիգ առանցքի շուրջ:*

*Աղբարկղը պետք է լինի.*

*Կայուն և պաշտպանված ուլտրա-մանուշակագույն ճառագայթներից.*

*դիմացկուն և պաշտպանված ցրտի, տաքի և ջերմաստիճանային տատանումներինց.*

*ճկուն.*

*Հրդեհակայուն /չբոցավառվող/*

*հարվածակայուն.*

*տրված EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներին համապատասխան:*

*Վերևի մասում պետք է ունենա ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող կափարիչ, իսկ կողքերի մասում աղբատար մեքենայի միջոցով բարձրացման և բեռնաթափման հնարավորություն, որոնք ամրացված են կաղապարին մետաղական կոնստրուկցիյի միջոցով: Աղբարկղի աջ և ձախ կողմերում պետք է լինեն երկուական բռնակներ:*

*Աղբարկղերը պետք է ունենան համարակալում, որը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ և ծխախոտը աղբարկղ գցելն արգելող զգուշացում:*

*Աղբարկղերի վրա պետք է լինի «Աղբի տեղը աղբամանում է» գրվածքը և աղբամանի կափարիչը բացելու հնարավորությունը պատկերող նշան/լոգո/, որոնք պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:*

*Առաջարկվող ապրանքները պետք է ունենան EN 840, RAL-GZ և ISO 9001 սերտիֆիկատներ:*

*Բեռնման եղանակը.*

*Հետևից բեռնաթափմամբ աղբատարների համար*

*Երաշխիքային ժամկետ.*

*Կենցաղային թափոնների կոնտեյների՝ ներառյալ բաղադրիչների համար - ոչ պակաս քան մեկ տարի:*

*Առաջարկում ենք կոնտեյների նմուշը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:*

*Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ:*

*Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության*

*վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից:*

*Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին, պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար:*

*Ապրանքը պետք է մինչ այդ շահագործման մեջ եղած չլինի Մատակարարի և (կամ) երրորդ անձանց մոտ, մինչ այդ ենթարկված չլինի վերանորոգման, նորացման կամ վերականգնման, չպետք է գտնվի գրավի, արգելանքի կամ այլ ծանրաբեռնության տակ:*

*Ապրանքի վրա չպետք է լինեն մեխանիկական վնասվածքների հետքեր, ինչպես նաև մատակարարվող Ապրանքի պաշտոնական նկարագրությանն այլ անհամապատասխանություններ:»*

*Ամփոփելով վերոգրյալը, հարկ է նշել, որ բողոքաբերը իր մտահոգությունները արտահայտել է երկու հարցերի վերաբերյալ՝ դրանք են.*

*- մատակարարվելիք ապրանքների մակնիշը,*

*- կասկածի տակ է դրվում մատակարարվելիք ապրանքների տարողունակությունը:*

*Մակնիշի մասով՝ ինչպես արդեն նշվեց, Մրցույթի մասնակիցը կարող էր առհասարակ բաց թողնել սյունակը կամ այն հանել, քանի որ Հրավերով համապատասխան սյունակը Մրցույթը հայտարարողի կողմից լրացված չէր, ուստի ենթակա չէր մասնակցի կողմից լրացման և եթե մեր ընկերությունը ներկայացրել է ավելին քան պետք էր, այդ հանգամանքը չի կարող շահարկվել՝ ձևական և արհեստածին խնդիրների մատնանշման համար:*

*Այսպիսիով «Գոլդ Ֆլուր» ՍՊ ընկերության կողմից պահպանվել են Մրցույթով բոլոր ընթացակարգերը և առաջարկված ապրանքները ամբողջությամբ համապատասխանում են Հրավերի պահանջներին:*

*Ավելին, անհամապատասխանություն չէր էլ կարող լինել, քանի որ ներկայացված ապրանքը մեր ընկերությունը պատվիրել է արտադրողից հենց Մրցույթով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան, ուստի դրանք արտադրողի կայքում չէին կարող լինել և դրանց առկայությունը այնտեղ պարտադիր չէր, քանի որ արտադրողի կայքում իր կողմից արտադրված կամ արտադրության պլանում ընդգրկված բոլոր տեսակի*

*արտադրանքների հրապարակումը՝ դրանց մանրամասն նկարագրությամբ, փվյալ երկրի օրենսդրությամբ և/կամ գործարար շրջանառության սովորույթներով ամենևին պարտադիր չէ, ավելին նմանօրինակ կայքերը կրում են, որպես կանոն, ճանաչողական և գովազդային բնույթ, ուստի անհիմն է մեր ընկերության բարեխղճությունը և գործարար համբավը կասկածի տակ դնելն ու արատավորելը՝ դատելով միայն արտադրողի կայքում ինչ-որ պահին առկա տեղեկատվությամբ:*

*Այնուամենայնիվ մեր ընկերության կողմից ներկայացված ապրանքների արտադրող հանդիսացող iplast («Aü-Пласт» ООО) ընկերությունը տրամադրել է ապրանքների՝ Հրավերով սահմանված տեխնիկական բնությագրի պահանջներին համապատասխանությունը հավաստող տեղեկանք, որն էլ ներկայացվում է սույն առարկությանը կից:*

*Հաշվի առնելով ողջ վերոգրյալը գտնում ենք, որ բողոքը զուրկ է իրավական և փաստական հիմնավորումներից և ենթակա է մերժման:»:*

«Գոլդ Ֆլուր» ՍՊԸ-ն 06.05.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

*«Ձեր կողմից քննվում է «Գավառտրանս» ՍՊ ընկերության կողմից բերված 12.04.2021թ-ի ԳԲՔԱ-ԼՕ-2021/28 ծածկագրով բողոքը՝ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» բաց մրցույթի շրջանակներում:*

*Չնայած այն հանգամանքի, որ «Գնումների գործընթացի կազմակերպման» ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ սահմանված իրավակարգավորումներից չի բխում, որ մրցույթի մասնակիցը մասնակցության փվյալ փուլում պարտավոր է ներկայացնել գնման առարկայի վերաբերյալ սերտիֆիկատ, ավելին վերոնշյալ որոշման 21-րդ հոդվածի 1-ին կետի ա ենթակետով սահմանվում է, որ. «Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության*

*սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում», այնուամենայնիվ, քանի որ 29.04.2021 թվականին կայացած բողոքի քննության նիստի ընթացքում ձեռք բերվեց բանավոր պայմանավորվածություն, որ մեր կողմից կներկայացվի EN 840 սերտիֆիկատի համապատասխանության անցկացման վերաբերյալ ընթակարգի նկարագրությունը, ուստի կից ներկայացնում ենք վերոնշյալ փաստաթուղթը՝ թղթային եղանակով, ինչպես նաև հայտնում ենք, որ http://www.iso-iran.ir/standards/bs/BS%20EN%20840-2-2012%20.%20Mobile%20Waste%20and%20Recycling%20Containers.pdf հղմամբ սույն գրությանը կից ներկայացված փաստաթուղթը ևս հասանելի է:»:*

5. **ԳԲՔԱ-ԼՕ**-2021/28 **բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 29.03.2021թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների բեռնատարողությունը պետք է լինի ոչ պակաս 450 կգ:

iii. Նույն հրավերի 4.3-րդ կետի 2 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Գավառտրանս» ՍՊԸ-ն և «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

v. Մասնակիցը հայտով ներկայացրած թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի մակնիշ նշել է 1100 LITERS CONTAINER, GREEN, NUMERATION, LOGO, իսկ ապրանքի բեռնատարողություն՝ 450 կգ:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 31.03.2021թ.-ի իստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 1.1 հավելվածի տեխնիկական բնութագրում չի ներառվել գնման ընթացակարգի հրավերով սահմանված՝ *«Վաճառողը մինչև Ապրանքը հանձնելը, Պատվիրատուի պատահական ընտրությամբ ոչ պակաս 4 հատ ապրանքանմուշ իր միջոցների հաշվին պետք է ենթարկի ՀՀ պետական փորձաքննության և Պատվիրատուին ներկայացնի փորձագիտական եզրակացություն՝ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ: Սույն կետով նշված ՀՀ պետական փորձաքննություն չիրականացնելը, կամ առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը Պատվիրատուին չտրամադրելը, կամ եթե տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է անհամապատասխանություն վերոհիշյալ տեխնիկական բնութագրին, ապա Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ապրանքից»* պահանջը:

vii. Նույն արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ Հասնձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել գնահատման նիստը և ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

viii. Հանձնաժողովի 02.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, արձանագրել է, որ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից անհամապատաս-խանությունները շտկվել են և ներկայացված հայտը համապատասխանում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

ix. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից՝ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

x. www.gnumner.am համացանցային կայքում 05.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

xi. «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Iplast ընկերության կողմից 12.04.2021թ.-ին տրված թիվ 0402/4.5-01 գրությամբ վերջինս հայտնել է, որ 1100 լ շարժական աղբի տարաները, որոնք արտադրվելու են «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի պատվերով, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» մրցույթի շրջանակներում, ունեն 450 կգ բեռնատարողություն: Վերոհիշյալ ապրանքը կստանա վաճառողի ծածկագիրը՝ արտադրական գործընթացի մեկնարկից անմիջապես առաջ:

6. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ

հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխա-

նություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված

դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով 15.02.2021թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով բաց մրցույթ հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների բեռնատարողությունը պետք է լինի ոչ պակաս 450 կգ, իսկ հրավերի 4.3-րդ կետի 2 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի մակնիշ նշել է 1100 LITERS CONTAINER, GREEN, NUMERATION, LOGO, իսկ ապրանքի բեռնատարողություն՝ 450 կգ:

Հանձնաժողովի 02.04.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետով արձանագրվել է, որ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված որոշել է վերջինիս հայտը գնահատել բավարար և որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից՝ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից, ինչի արդյունքում www.gnumner.am համացանցային կայքում

05.04.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ սահմանելով 10 օրացուցային օր անգործության ժամկետ:

«Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Iplast ընկերության կողմից 12.04.2021թ.-ին տրված թիվ 0402/4.5-01 գրությամբ վերջինս հայտնել է, որ 1100 լ շարժական աղբի տարաները, որոնք արտադրվելու են «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի պատվերով, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» մրցույթի շրջանակներում, ունեն 450 կգ բեռնատարողություն: Վերոհիշյալ ապրանքը կստանա վաճառողի ծածկագիրը՝ արտադրական գործընթացի մեկնարկից անմիջապես առաջ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով Iplast ընկերության կողմից 12.04.2021թ.-ին տրված թիվ 0402/4.5-01 գրությունը և «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացvած այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից չի նշվել առաջարկվող ապրանքի մակնիշը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես ապրանքի մակնիշ նշել է 1100 LITERS CONTAINER, GREEN, NUMERATION, LOGO:

Նման պայմաններում Բողոքներ քննող անձը փաստում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ թիվ 1.1 հավելվածով ապրանքի մակնիշը նշված չլինելու հիմքով, Մասնակցի հայտում չարձանագրելով անհամապատասխանություն՝ գործել է իրավաչափ:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված՝ «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով նշված ապրանքի բեռնատարողության՝ գնման ընթացակարգի հրավերով սահմանված բեռնատարողությունից պակաս լինելու հանգամանքին, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում, որպես առաջարկվող ապրանքի բեռնատարողություն նշվել է 450 կգ, ինչը համնապատասխանում է գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի համար սահմանված բեռնատարողությանը: Ի հավաստում «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի կողմից նշված տեխնիկական

բնութագրով նշված ապրանքի բեռնատարողությանը, թիվ 1.1 հավելվածով նշված արտադրող Iplast ընկերությունը, 12.04.2021թ.-ին տրված թիվ 0402/4.5-01 գրությամբ հայտնել է, որ 1100 լ շարժական աղբի տարաները, որոնք արտադրվելու են «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի պատվերով, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» մրցույթի շրջանակներում, ունեն 450 կգ բեռնատարողություն: Վերոհիշյալ ապրանքը կստանա վաճառողի ծածկագիրը՝ արտադրական գործընթացի մեկնարկից անմիջապես առաջ:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների պոլիէթիլենային կոնտեյներների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ՝ պահպանելով Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.9-րդ կետով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի 02.04.2021թ.-ին հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը և 02.04.2021թ.-ի 5-րդ արձանագրության 2.2-րդ կետով կայացրած որոշումը անվավեր ճանաչելու հիմքեր առկա չեն, ուստի Ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման:

Բողոքներ քննող անձը անդրադառնալով «Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված՝ Կարգի 67-րդ կետը կիրառելուն պարտավորեցնելու մասին պահանջին, փաստում է, որ Հանձնաժողովը՝ Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը շտկելու, մասնավորապես՝ ապրանքի մակնիշը նշելու խնդրի առկայության պարագայում, պետք է կիրառի ոչ թե Կարգի 67-րդ կետը, այլ Կարգի 41-րդ կետը, քանի որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ինչ վերաբերում է Կարգի 67-րդ կետի կիրառման արդյունքում Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի բեռնատարողությունը ստուգելու հանգամանքին, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ

գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի ներկայացրած ապրանքի բռնատարողության վերաբերյալ տեղեկությունները ստուգելու համար Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթը կիրառելի չէ՝ սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների հիման վրա, ինչպես նաև այն, որ Iplast ընկերության կողմից 12.04.2021թ.-ին տրված թիվ 0402/4.5-01 գրությամբ հաստատվում է, որ 1100 լ շարժական աղբի տարաները, որոնք արտադրվելու են «Գոլդ-Ֆլուր» ՍՊԸ-ի պատվերով, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/9» մրցույթի շրջանակներում, ունեն 450 կգ բեռնատարողություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Գավառտրանս» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/28 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**